

# ՀԱՅԱՍՏԱՆԸ ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ

## ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՑԱՆԿՈՒՄ



United Nations  
Educational, Scientific and  
Cultural Organization

2020թ. Մարտ 19

*Հարցազրույց ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Արեգ Միքայելյանի հետ ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության թեմայով*

**✚ Ինչպիսի՞ կարևորություն է իրենից ներկայացնում ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկը:**

Երբ հետաքրքրվում ես որևէ երկրի արժեքներով, բնական է՝ սկսում ես որոնել համացանցային կայքէջերը, հարցուփորձ անել, գտնել ամենքահետաքրքիր ու արժանի վայրերը, որոնք արժե այցելել: ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության, ինչպես և մյուս երկու տեսակի արժեքների ցանկերը ամենաբարձր ատյանից երաշխավորում են ամեն երկրում եղած արժեքների որակը, քանի որ դրանք անցել են ամենախիստ փորձաքննություն, բազմիցս ստուգվել և քննվել են և նոր միայն ընդունվել ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկերը: Այս տեսակետից ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկերը միանշանակ հանդիսանում են թե՛ տուրիզմի և թե՛ այլ տեսանկյունից ամենահարմար ուղեցույցը: Իսկ ամենակարևորը, դրանք ներկայացնում են ամբողջ պատմության ընթացքում մարդկության բարձրագույն ստեղծագործությունները, որոնք արժե սովորել, ուսումնասիրել և որոնցով նաև կարելի է ճանաչել աշխարհի ժողովուրդներին և երկրները:

✦ **Հայաստանի ո՞ր մշակութային արժեքներ են համալրում այն:**

Ինչպես նշեցի, ՅՈՒՆԵՍԿՕ-ն ունի 3 ցանկ՝ Համաշխարհային ժառանգության (Որ երբեմն պայմանականորեն կոչվում է «Նյութական արժեքների»), Ոչ նյութական մշակութային արժեքների և Փաստագրական արժեքների («Աշխարհի հիշողություն» անվանմամբ գրանցամատյանը): Դրանցում Հայաստանից համապատասխանաբար կան 3, 6 և ևս 3 արժեք, ընդամենը՝ 12: Առաջինում ընդգրկված են 1) Սանահինի ու Հաղպատի վանքերը, 2) Էջմիածնի մայր տաճարը, եկեղեցիներն ու Զվարթնոցի հնագիտական վայրը և 3) Գեղարդի վանքն ու Ագատ գետի վերին հովիտը: Երկրորդում ընդգրկված են 1) դուդուկը և նրա երաժշտությունը, 2) հայկական խաչքարերի արվեստը, 3) հայոց «Սասնա Ծռեր» էպոսը, 4) լավաշի մշակույթը,



5) Քոչարի խմբային պարը և 6) հայ տառարվեստը: [Երրորդ ցանկում Հայաստանից ընդգրկվել են](#)

Մատենադարանի հնագույն ձեռագրերի հավաքածուն (1998), հետո մեզ հաջողվեց ընդգրկել Բյուրականյան առաջին շրջահայությունն (FBS կամ Մարգարյանի շրջահայություն) իր թվայնացված տարբերակով (DFBS, 2011), այնուհետև արդեն՝ Արամ Խաչատրյանի ձեռագիր ձայնանիշները (նոտաները) և ֆիլմերի երաժշտությունը (2017): Երրորդ ցանկը գուցե ավելի պակաս հայտնի է, քանի որ ՅՈՒՆԵՍԿՕ-ն այն ավելի ուշ է ստեղծել (1991), սակայն այստեղ ընդգրկված են այնպիսի արժեքներ, ինչպիսիք են համաշխարհային ամենանշանավոր կոմպոզիտորների ստեղծագործությունները և այլ արժեքներ: Այնպես որ սա չափազանց հեղինակավոր ցանկ է:

- ✚ Ի՞նչ դեր ունի ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանը Հայաստանի մշակութային արժեքների՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի այդ ցանկի մեջ ընդգրկելու գործում:

Հենց Բյուրականի աստղադիտարանում է ստեղծվել արժեքներից մեկը՝ Բյուրականյան առաջին շրջահայությունը, 1 մետրանոց Շմիդտի համակարգի աստղադիտակով 15-ամյա

դիտումների արդյունքում 1965-1980թթ.: Հիմնականում, իհարկե, պետք է նշել ակադ. Բենիամին Մարգարյանի անունը, սակայն նրան անմիջականորեն օգնել են Վալենտին Լիպովեցկին և Ջիվան Ստեփանյանը:



Այնուհետև ես ինքս նույնպես իմ համեստ մասնակցությունն ունեցա՝ 1988-ին շրջահայությունն ընդարձակելով Ծիր Կաթնի տիրույթներում: Դիտումները կատարված էին լուսանկարչական թիթեղների վրա, սակայն 2002-2007-ին մեր թիմով դրանք թվայնացրեցինք, և դա արդեն հնարավորություն տվեց դիմել ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկում ընդգրկվելու համար: Ասեմ նաև, որ դա բավականին դժվար գործընթաց էր. ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ քննարկումներն ու բանակցությունները տևեցին 3-4 տարի, որից հետո միայն մեր արժեքն ընդունվեց, քանի որ այն հիրավի եզակի է աշխարհում:

- ✚ Արդյոք հայ հանրությունը իրազեկվա՞ծ է Հայաստանի՝ այդ ցանկում լինելու մասին:

Ցավոք՝ ոչ բավարար: Ավելի հավանական է, որ այս մասին շատ քչերը գիտեն կամ նույնիսկ եզակիները: Ընդհանրապես, զավեշտական է, բայց ես դեռևս չեմ հանդիպել որևէ մեկին, ով կկարողանա թվարկել Հայաստանի բոլոր ՅՈՒՆԵՍԿՕ-ի արժեքները, իսկ դրանք կարելի էր նույնիսկ դաբոցում

սովորեցնել: Մեր արժեքի դեպքում անբավարար իրազեկվածության պատճառն իհարկե նաև մենք ենք, ընդունում եմ հենց իմ անձնական մեղքը: Սակայն համեստություն անելու փոխարեն, հավանաբար, անհրաժեշտ է այն պատշաճ կերպով ցուցադրել Բյուրականում (ինչը բնականաբար կգրավի նաև այցելուներին), համացանցային ներկայացուցչական կայքէջ ստեղծել, դրան նվիրված միջոցառումներ կազմակերպել (ինչը նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ն է խրախուսում): Ի դեպ, ՅՈՒՆԵՍԿՕ-ն նաև ունի դրամաշնորհներ, որոնք կարելի է ծախսել համապատասխան արժեքների վրա՝ դրանք ավելի պատշաճ տեսքի բերելու, ըստ արժանվույն պահպանելու և լավ ներկայացնելու համար:

**✚ Ինչպիսի՞ գործունեություն է ծավալում ԲԱ-ը տարբեր հարթակներում Հայաստանի ներգրավվածության ընդլայնման և համաշխարհային հանրության ուշադրությունը գրավելու համար:**

Ես միշտ ասել եմ, որ Բյուրականի աստղադիտարանը միայն գիտական ինստիտուտ չէ, թեև այն միշտ եղել և մնում է Հայաստանի ամենաակտիվ աշխատող և ամենարդյունավետ գիտական հաստատություններից մեկը: Օրինակ՝ ՀՀ ԳԱԱ վերլուծության արդյունքում Բյուրականի աստղադիտարանն արտասահմանյան բարձր վարկանիշային ամսագրերում տպագրած աշխատանքներով ակադեմիական հիմնարկների մեջ երկրորդն է, Webometrics տվյալների շտեմարանում Հայաստանից ընդգրկված 6 հաստատություններից մեկն է, իր ստացած միջազգային դրամաշնորհներով վերջին բոլոր տարիներին Հայաստանում առաջիններից մեկն է: Իսկ Scopus-ի Scimago Countries Rating («աշխարհի երկրների վարկանիշները») շտեմարանում Հայաստանն աստղագիտությամբ ամենաբարձր դիրքերն է զբաղեցնում: Ավելացնեմ նաև, որ կազմակերպվում են բազմաթիվ պրոֆեսիոնալ միջոցառումներ (գիտաժողովներ, խորհրդակցություններ, աշխատաժողովներ, երիտասարդական դպրոցներ ևն), շատ ակտիվ է միջազգային

համագործակցությունը և այլն: Այսինքն՝ վստահաբար կարելի է ասել, որ Բյուրականի աստղադիտարանի նախկին փառքը հաջողությամբ պահպանում և բազմապատկում ենք: Գիտական գործունեությունից զատ կարելի է նշել աստղադիտարանի կրթական, մշակութային և հանրային գործունեությունը:



Այսօր Բյուրականի աստղադիտարանը ՀՀ Ազգային արժեք է, Միջազգային աստղագիտական միության (ՄԱՄ) տարածաշրջանային աստղագիտական կենտրոն, այստեղ գործում է շատ ակտիվ Հայկական աստղագիտական ընկերությունը, ստեղծվել է Հայկական վիրտուալ աստղադիտարան, ԲԱ ունի ճարտարապետական ուրույն համալիր, հանդիսանում է պահպանվող տարածք՝ Դենդրոպարկ, և տուրիզմի տեսանկյունից Հայաստանի կարևորագույն այցելավայրերից մեկը: Ծավալվող գործունեության ձևերից կարելի է նշել բազմաթիվ այցելուների ընդունումը, հանրամատչելի նյութերի հրապարակումը, հանրամատչելի միջոցառումների



կազմակերպումը, ԶԼՄ-ների հետ աշխատանքը (հաղորդումներ, ֆիլմեր, հարցազրույցներ, հոդվածներ, մամուլի ասուլիսներ, մամուլի հաղորդագրություններ ևն), դպրոցական դասախոսությունները: Աստղադիտարանը նաև ակտիվ է հարակից ոլորտներում նոր ուղղություններ սկսելու և զարգացնելու գործում՝ տիեզերական հետազոտություններ և տեխնոլոգիաներ, աստղափինֆորմատիկա, պատմամշակութային աստղագիտություն, այլ միջգիտակարգային

բնագավառներ: Այս ամենը ցույց է տալիս, որ Բյուրականի աստղադիտարանը հատուկ նշանակություն ունի մեր ժողովրդի համար, և այն անհրաժեշտ է հատուկ ձևով պահպանել, զարգացնել և լավագույնս ծառայեցնել մեր երկրին:

*Հարցազրույցը վարեց Մելինե Ասրյանը*